

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ	2
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ	4
3.1. Եկամուտները.....	5
3.2. Ծախսերը	9
3.3. Պակասուրդը	13
4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	14
5. ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի բյուջեն «հետհեղափոխական» ժամանակահատվածի առաջին բյուջեն է, որն ամբողջությամբ մշակվել, հաստատվել և կատարվել է նոր կառավարության կողմից: Հետևաբար, բյուջեի կատարողականի վերլուծությունը ցույց կտա, թե ինչ արդյունավետությամբ է ՀՀ կառավարությունը իրականացրել իր իսկ կողմից սահմանված նպատակները և քանակական ցուցանիշները: Պետական բյուջեն հանդիսանում է կառավարության բոլոր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների և դրանցից բխող ծրագրերի ֆինանսական պլանը: Հետևաբար, դրա պատշաճ իրականացումը իր արտացոլումն է գտնում տնտեսության բոլոր բնագավառներում՝ հանգեցնելով կառավարության նպատակների իրագործմանը:


Միաժամանակ, հարկ է նշել, սակայն, որ 2019թ. պետական բյուջեն մշակվել և իրականացվել է 2017-ին ընդունված և 2018-ի հունվարին ուժի մեջ մտած նոր հարկաբյուջետային կանոնների հիման վրա: Այս կանոնները մշակվել են նախորդ կառավարության ջանքերով և, բացի պարտքի կայունության ապահովման նպատակի իրագործումից, միտված են նաև հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, պետական ծախսերի կառուցվածքի բարելավմանը և տնտեսական պոտենցիալ աճի արագացմանը: Հարկաբյուջետային կանոնների ուժի մեջ մտնելուց հետո՝ 2018 և 2019 թվականներին հնարավոր է եղել կրճատել կառավարության պարտքի մակարդակը, որը 2019-ի տվյալներով նվազել է ՀՆԱ-ի 50% շեմից և կազմել 49.9%:

Պետական բյուջեի եկամուտները 2019թ. թեև գերակատարվել են բյուջեով հաստատված պլանի նկատմամբ, սակայն ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են, իսկ ծախսերն իրականացվել են զգալի թերակատարումներով՝ ինչպես պլանի, այնպես էլ ճշտված պլանի նկատմամբ: Բյուջեի պլանը տարվա ընթացքում ենթարկվել է զգալի ճշտումների, որոնք, սակայն, փաստացի չեն կատարվել, և արձանագրված փաստացի ցուցանիշները հեռու են ինչպես օրենքով հաստատված, այնպես էլ ճշտված ցուցանիշներից: Արդյունքում, բյուջեի պակասուրդը նվազել է, և հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա եղել է զսպող, մինչդեռ պլանավորվել էր իրականացնել չեզոք քաղաքականություն:

2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ

2019թ. ՀՀ տնտեսական աճը կազմել է 7.6%, որը նախորդ տարվա ցուցանիշից բարձր է 2.4 տոկոսային կետով: ՀՆԱ-ի աճին դրական են նպաստել ծառայությունների (5.2 տոկոսային կետ), արդյունաբերության (1.9 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային կետ) ճյուղերը՝ աճելով համապատասխանաբար 10.3%-ով, 10.2%-ով և 4.2%-ով, իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն (0.5 տոկոսային կետ)՝ նվազելով 4%-ով¹:

Գծապատկեր 1. Տնտեսության ճյուղերի և ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների նպաստումները տնտեսական աճին, տոկոսային կետ



Նախորդ տարիների համեմատ 2019թ. ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը նշանակալի փոփոխությունների չի ենթարկվել: Արդյունաբերության բարձր աճին մեծ նպաստում է ունեցել 2019-ի կեսից վերականգնված հանքարդյունաբերությունը (աճը 2018-ի նկատմամբ՝ 19.6%), իսկ ծառայությունների աճին շարունակել է բարձր նպաստում ունենալ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղը (աճը՝ 19.4%):

Ծախսային բաղադրիչների (պահանջարկի) տեսանկյունից ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը վատթարացել է: Մասնավորապես, եթե 2017 և 2018 թվականներին ներդրումները ՀՆԱ-ի աճին ունեցել են դրական նպաստում՝

¹ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն:

համապատասխանաբար 2.8 և 5.5 տոկոսային կետով, ապա 2019-ին դրանց նպաստումը դարձել է բացասական՝ -3.1 տոկոսային կետ: Սա նշանակում է, որ տնտեսական աճն ամբողջությամբ եղել է սպառման հաշվին, իսկ ներդրումները, որոնք անհրաժեշտ են հետագա տնտեսական աճի համար, եղել են բացասական:

Տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման գործում նշանակալի նպաստում են ունեցել նաև մի շարք ժամանակավոր գործոններ, ինչպիսիք են, օրինակ՝ ավտոմեքենաների ներմուծման, ՀՀ տարածքում վերանորոգման և դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ վերավաճառքի կտրուկ աճը, ստվերային տնտեսության կրճատումը և այլն: Դրանք հիմնականում նպաստել են սպառման աճին, ինչի արդյունքում էլ ձևավորվել է ծախսային բաղադրիչների վերոհիշյալ կառուցվածքը:

Վերոհիշյալ տեղեկատվությունը ցույց է տալիս, որ տնտեսական աճը պայամանավորվել է մի կողմից՝ արդեն ավանդական դարձած աճի աղբյուրներով (ծառայություններ, հանքարդյունաբերություն), մյուս կողմից՝ ժամանակավոր և ցածր ավելացված արժեք գեներացնող գործունեություններով: Իսկ կառավարության կողմից տրված՝ բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկման հաշվին տնտեսական աճ ապահովելու վերաբերյալ խոստումները այդպես էլ չհաջողվեց իրականացնել և դժվար թե հաջողվի, քանի որ առաջիկա տարիներին հազիվ տնտեսությունը կարողանա վերականգնվել համավարակի հետևանքով առաջացած ճգնաժամից:

Միաժամանակ, արտաքին առևտրի ոլորտում գրանցվել է դրական դինամիկա և զուտ արտահանման նպաստումը տնտեսական աճին նախորդ տարիների բացասականից դարձել է դրական՝ կազմելով 0.8 տոկոսային կետ (Գծապատկեր 1):


2019 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 0.7%, իսկ միջին գնաճը՝ 1.4%: Ելնելով ցածր գնաճային զարգացումներից՝ ՀՀ ԿԲ-ն իրականացրել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ տարվա ընթացքում երկու անգամ իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը (սահմանելով 5.5%): Սակայն, դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի փոփոխությունը չի օգնել գնաճը մոտեցնել նույնիսկ ԿԲ թիրախի ստորին սահմանին (ԿԲ թիրախը՝ 4 +/-1.5):

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

2019 թվականի պետական բյուջեի կատարումը համապատասխանել է հարկաբյուջետային կանոններով սահմանված չափանիշներին: Պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդի մեծությունը, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը ցածր է եղել անվանական ՀՆԱ-ի աճի պատմական միտումների հիման վրա հաշվարկված ցուցանիշից: Սակայն, կանոնների ընդհանուր տրամաբանության կարևոր բաղադրիչներից մեկը չի պահպանվել, քանի որ կապիտալ ծախսերի մակարդակը սահմանված չափով չի աճել:

Վերջին մի քանի տարիներին ինչպես պետական բյուջեի եկամուտների, այնպես էլ ծախսերի անվանական մեծություններն ունեցել են միջինից բարձր աճեր: 2019թ. պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 12.6%-ով՝ կազմելով 1,629 մլրդ դրամ, իսկ եկամուտներն աճել են 16.7%-ով՝ կազմելով 1,566 մլրդ դրամ: 2016-2019թթ. ծախսերի միջին աճը կազմել է 3.9%, իսկ եկամուտներինը՝ 7.8%:

Գծապատկեր 2. Պետական բյուջեի հիմնական ցուցանիշները 2016-2019 թվականներին




Սակայն, ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի կշիռը վերջին տարիներին ունեցել է նվազման միտում, որը փոխվել է 2019-ին, երբ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 24.8%: Սակայն, պետք է նկատել, որ 2017 և 2018 թվականներին ծախսերի կշիռը կտրուկ նվազել էր՝ համապատասխանաբար 1.6 և 3.0 տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ

պետության դերը տնտեսությունում նվազել է: Այդ համատեքստում, 2019թ. ընդամենը 0.8 տոկոսային կետով աճը բավական փոքր է և չի փոխհատուցում նախորդ տարվա նվազումը:

Պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում ևս աճել են 2019-ին, սակայն ավելի մեծ չափով՝ մոտ 1.5 տոկոսային կետով: Ծախսերի և եկամուտների նշված դինամիկայի արդյունքում աստիճանաբար նվազել է պետական բյուջեի պակասորդը՝ 2019-ին կազմելով 64 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1.0 տոկոսը:

Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը 2019-ին եղել է 0.9% զսպող՝ պայմանավորված ծախսերի ընդլայնող (+0.5%) և եկամուտների զսպող (-1.5%) ազդեցություններով: Հարկ է նշել, որ 2019թ. բյուջետային ուղերձով նախատեսվում էր իրականացնել չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն՝ 2018-ին պլանավորվածից ավելի շատ զսպող լինելու պայմաններում, սակայն բյուջեի ծախսերի թերակատարման, ինչպես նաև եկամուտների գերակատարման արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը շեղվել է պլանավորվածից (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Հարկաբյուջետային ազդակը 2014-2019 թվականներին²




3.1. Եկամուտները

2019 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.8%-ը՝ նախորդ տարվա 22.3%-ի դիմաց, իսկ հարկերը և տուրքերը՝ ՀՆԱ-ի 22.3%-ը՝ նախորդ տարվա 20.9%-ի դիմաց: Արդյունքում՝ հարկային եկամուտների և տուրքերի կշիռը ՀՆԱ-ում աճել է մոտ 1.4 տոկոսային կետով, ինչը

² Փաստացի ազդակի ցուցանիշներն արտացոլված են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում, իսկ ծրագրված ցուցանիշները՝ ՀՀ կառավարության 2019թ. բյուջետային ուղերձում:

հիմնականում պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճով և հարկային վարչարարության բարելավմամբ:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 2016-2019 թվականներին, % ՀՆԱ-ում



Եկամուտների փաստացի ցուցանիշները բավական հեռու են ինչպես պլանավորված, այնպես էլ ճշտված պլանի ցուցանիշներից: Ընդհանուր եկամուտների փաստացի ծավալը բյուջեի պլանի նկատմամբ գերակատարվել է մոտ 4.6%-ով, իսկ ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել է մոտ 2.7%-ով: Հարկային եկամուտների ծավալը կազմել է 1,464.3 մլրդ դրամ, որը բյուջեի պլանի նկատմամբ գերակատարվել է մոտ 4.5%-ով, իսկ ճշտված պլանի համեմատ՝ թերակատարվել է 1.6%-ով:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտների ծավալը և կատարողականը

մլրդ դրամ	Տարեկան պլան ³	Տարեկան ճշտված պլան ⁴	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,496.5	1,609.1	1,565.5	97.3%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,401.9	1,488.7	1,464.3	98.4%
Պաշտոնական դրամաշնորհներ	39.5	40.1	12.4	30.8%
Այլ եկամուտներ	55.1	80.3	88.8	110.6%


³ Հաստատված է «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

⁴ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

Ճշտված պլանի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների կատարողականները 2019-ին նախորդ տարվա նկատմամբ փոքր-ինչ նվազել են, սակայն 2016 և 2017 թվականների նկատմամբ առկա է զգալի բարելավում, ինչը հատկապես նկատելի է հարկային եկամուտների և այլ եկամուտների կատարողականների ցուցանիշներից: Հարկային եկամուտները 2016 և 2017 թվականների միջին 94.0% կատարողականի փոխարեն 2019-ին հավաքագրվել են 98.4%-ով, իսկ այլ եկամուտները՝ 88.9%-ի փոխարեն 110.6%-ով:

2019թ. փաստացի պաշտոնական դրամաշնորհները կազմել են տարեկան ճշտված ծրագրի 30.8% ը, այսինքն՝ ճշտված պլանից պակաս է ստացվել 27.7 մլրդ դրամ: Նշված ցուցանիշը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում տրամադրվել է 7.9 մլրդ դրամ՝ կազմելով տարեկան ծրագրված մուտքերի 25.3%-ը: Նպատակային դրամաշնորհների կատարողականի ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ նախատեսված նպատակային ծրագրերը կատարման ցածր աստիճան են ունեցել:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի եկամուտների կատարողականները ճշտված պլանի նկատմամբ 2016-2019 թվականներին, %



2019 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 88.8 մլրդ դրամ՝ 10.6%-ով (8.5 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ծրագրված և 22.8%-ով (16.5 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, ինչպես նաև ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից մուտքերով:

Հարկային եկամուտների ծավալը 2019-ին նախորդ տարվա համեմատ աճել է 16.4 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են եկամտային հարկի (նպաստումը՝ 4.3 տոկոսային կետ), ԱԱՀ-ի (2.9 տոկոսային կետ), ակցիզային հարկի (1.5 տոկոսային կետ) և մաքսատուրքերի (1.2 տոկոսային կետ) բարձր աճերը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը և հարկատեսակների նպաստումները, 2019թ.

	Ծավալը, մլրդ դրամ	Աճը 2018թ.-ի նկատմամբ, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	1,464.3	16.4	16.4
ԱԱՀ	474.4	8.3	2.9
Շահութահարկ	181.3	6.6	0.9
Եկամտային հարկ	410.3	15.1	4.3
Ակցիզային հարկ	127.5	17.0	1.5
Շրջանառության հարկ	29.0	35.9	0.6
Արտոնագրային հարկ	4.1	-36.8	-0.2
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	58.3	7.4	0.3
Մաքսատուրք	95.1	18.6	1.2
Սոցիալական վճար	18.7	7.4	0.1
Այլ հարկային եկամուտներ	21.2	-3.6	-0.1
Պետական տուրք	45.9	21.1	0.6
Հարկերի անցումային գերավճար	-1.5	-	-

Եկամտային հարկի բարձր՝ 15.1% աճը հիմնականում պայմանավորված է վարձու աշխատողների թվաքանակի աճի հետ (որոնք կարող են լինել ինչպես նոր ստեղծված, այնպես էլ գործող՝ ստվերից դուրս բերված աշխատատեղեր): ԱԱՀ-ի և մաքսատուրքերի բարձր աճերը, որոնց ընդհանուր նպաստումը հարկային եկամուտների աճին կազմել է մոտ 4.1 տոկոսային կետ, պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման կտրուկ աճով: Այսինքն՝ վերջինս հանդիսանում է մեկանգամյա գործոն և 2020 թվականին այլևս չի շարունակվելու:


Զգալի աճ են գրանցել նաև ակցիզային հարկի ծավալները՝ 17.0%, ինչը հիմնականում պայմանավորված է ալկոհոլային խմիչքների, քայուղերի և ծխախոտի ակցիզային հարկերի դրույքաչափերի բարձրացմամբ:

3.2. Ծախսերը

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում աճել է 0.8 տոկոսային կետով, ընդ որում՝ ընթացիկ ծախսերի կշիռն աճել է 0.3 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը՝ 0.5 տոկոսային կետով: 2019 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.8%-ը, որից ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 21.9%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները՝ 2.9%-ը (որից 0.5%-ը ՌԴ-ից ստացված ռազմական վարկի հաշվարկային գումարն է):

Ծախսերի մակարդակը թեև փոքր-ինչ աճել է 2018-ի նկատմամբ, այնուամենայնիվ, շարունակում է մնալ ցածր 2016 և 2017 թվականների մակարդակից (Գծապատկեր 5): Առավել խնդրահարույց է կապիտալ ծախսերի ցածր մակարդակը, այն դեպքում երբ կառավարությունը նպատակադրել է⁵ աստիճանաբար ավելացնել դրանց կշիռը ՀՆԱ-ում՝ մատնանշելով դրանց կարևորությունը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: 2019-ին կապիտալ ծախսերը, թերակատարման արդյունքում, եղել են ավելի ցածր ինչպես 2017, այնպես էլ 2016 թվականների մակարդակներից: Այս ցուցանիշը բացասական ազդեցություն կունենա հետագա տնտեսական աճի տեմպի վրա:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերը 2016-2019 թվականներին, % ՀՆԱ-ում



⁵ 2017-ին ընդունված և 2018-ից գործող հարկաբյուջետային նոր կանոնների հիմնական տրամաբանության մասն է կազմում կապիտալ ծախսերի կշիռի աստիճանական աճը, ինչը կնպաստի տնտեսական աճի արագացմանը և պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազմանը: Հետևաբար, կառավարությունը ինչպես 2019 թվականի բյուջեի մասին օրենքով, այնպես էլ 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով նախատեսել է կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության աճ՝ նշված փաստաթղթերում 2019-ի համար սահմանելով համապատասխանաբար 3.3% և 4.1% կանխատեսվող ցուցանիշները:

2019 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը 2019-ի պլանից ցածր են 1.1%-ով, իսկ ճշտված պլանից՝ 7.6%-ով: Ընթացիկ ծախսերի փաստացի ծավալը կազմել է 1,437.1 մլրդ դրամ, որը պլանի նկատմամբ գերակատարվել է 0.8%-ով, իսկ ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել է 4.2%-ով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) 2019-ին կազմել են 192.3 մլրդ դրամ՝ պլանի նկատմամբ թերակատարվելով 13.4%-ով, իսկ ճշտված պլանի նկատմամբ՝ 26.7%-ով: Ծախսերի փաստացի ցուցանիշները ավելի մոտ են բյուջեի պլանին, քան ճշտված պլանին, ինչն անհասկանալի է, քանի որ ճշտումներն իրականացվում են բյուջետային տարվա ընթացքում առկա տեղեկատվության հիման վրա, հետևաբար պետք է առավել ճշգրիտ լինեն քան օրենքով հաստատված պլանը:

Աղյուսակ 3. Պետական բյուջետային ծախսերի կատարողականը տնտեսագիտական դասակարգմամբ, 2019թ.

մլրդ դրամ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,648.1	1,762.9	1,629.4	92.4%
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	1,426.1	1,500.5	1,437.1	95.8%
Աշխատանքի վարձատրություն	168.0	174.4	172.6	98.9%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	196.5	207.3	192.1	92.7%
Տոկոսավճարներ	158.1	160.2	157.6	98.3%
Սուբսիդիաներ	110.8	115.0	113.4	98.6%
Դրամաշնորհներ	120.7	161.1	150.0	93.1%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	454.2	464.4	453.2	97.6%
Այլ ծախսեր	217.9	218.0	198.3	90.9%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	222.0	262.4	192.3	73.3%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	222.0	262.4	193.0	73.5%
Հիմնական միջոցներ	222.0	262.4	193.0	73.5%
Շենքեր և շինություններ	152.8	183.9	143.5	78.0%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	66.0	73.8	47.7	64.7%
Այլ հիմնական միջոցներ	3.2	4.7	1.8	39.2%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(0.0)	(0.0)	(0.7)	-

Ընթացիկ ծախսերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է «դրամաշնորհների» և «սոցիալական նպաստների և կենսաթոշակների» թերակատարմամբ, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 93.1% և 97.6%:

Կապիտալ ծախսերի շարքում թերակատարվել են ինչպես «շենքեր և շինությունների կառուցում», այնպես էլ «մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում» հոդվածներով նախատեսված ծախսերը՝ համապատասխանաբար 22.0 և 35.3 տոկոսով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերի կատարողականը գործառնական դասակարգմամբ, 2019թ.

մլրդ դրամ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2018-ի նկատմամբ, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,648.1	1,762.9	1,629.4	92.4%	12.6%
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	315.7	340.1	320.1	94.1%	14.9%
Պաշտպանություն	313.3	332.4	315.6	95.0%	32.3%
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	138.8	150.4	143.7	95.6%	16.7%
Տնտեսական հարաբերություններ	133.4	156.9	111.9	71.3%	-0.3%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	11.9	10.9	5.8	53.4%	2.2%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	18.0	25.6	16.2	63.4%	38.8%
Առողջապահություն	91.7	103.9	99.3	95.6%	24.8%
Հանգիստ, մշակույթ և կրոն	30.3	35.7	33.6	94.0%	32.6%
Կրթություն	141.9	139.5	129.3	92.7%	6.3%
Սոցիալական պաշտպանություն	444.3	465.4	453.9	97.5%	9.0%
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	8.8	2.1	0.0	0.0%	-

Չնայած պետական բյուջեի ծախսերի աճին, դրանք զգալի չափով թերակատարվել են, ինչը պայմանավորված է գործառնական դասակարգման բոլոր հոդվածներում ծախսերի թերակատարմամբ: Առավել նշանակալի են եղել «տնտեսական հարաբերություններ», «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» և «պաշտպանություն» հոդվածներով ծախսերի համապատասխանաբար 28.7%, 5.9% և 5.0% թերակատարումները:

«Տնտեսական հարաբերություններ» հոդվածով ծախսերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է եղել ճանապարհային տրանսպորտի և գյուղատնտեսության ոլորտներում նախատեսված ծախսերի համապատասխանաբար 25.3% և 22.1% թերակատարմամբ: Հատկանշական է, որ գյուղատնտեսության ոլորտում բյուջեի ճշտված պլանով նախատեսվել էր իրականացնել 41.0 մլրդ դրամ ծախս, որից 26.5 մլրդ դրամը ոռոգման համակարգերի գծով, սակայն այդ ծախսերից իրականացվել է ընդամենը 31.9 մլրդ դրամը՝ մոտ 10 մլրդ դրամով պակաս, իսկ ոռոգման համակարգի գծով նախատեսված ծախսերից՝ ընդամենը 22.2 մլրդ դրամը: Ստացվում է, որ գյուղատնտեսության ոլորտի աջակցման և խթանման քաղաքականությունը նույնպես թերի է իրականացվել: Մինչդեռ տարիներ շարունակ գրանցվող գյուղատնտեսության ոլորտի անկումը հաղթահարելու համար անհրաժեշտ է առնվազն ապահովել մշակված քաղաքականության իրականացումը:

Պաշտպանության ոլորտի ծախսերը, չնայած ճշտված պլանի նկատմամբ 5.0% թերակատարմանը, 2018թ. փաստացի ցուցանիշի համեմատ աճել են 32.3%-ով և ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 5.3 տոկոսային կետով: Ընդհանուր ծախսերի աճին նշանակալի նպաստում են ունեցել նաև «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ», «սոցիալական պաշտպանություն» և «հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» հոդվածների շրջանակներում կատարված ծախսերի աճերը՝ համապատասխանաբար 2.9, 2.6 և 1.4 տոկոսային կետով:

Ընդհանուր առմամբ կարևոր է ընդգծել, որ 2019թ. պետական բյուջեն, թեև ամբողջությամբ համարվում է կազմված ծրագրային բյուջետավորման հիմունքներով, այնուամենայնիվ փաստացի դեռևս հեռու է այդպիսին լինելուց: Մասնավորապես, բյուջեի ծրագրերի մեծ մասը զուրկ է ոչ ֆինանսական ցուցանիշներից և թիրախներից, ինչը պարզապես անհնարին է դարձնում ծրագրերի արդյունավետության ստուգումը, հետևաբար անիմաստ է դառնում ըստ ծրագրերի ծախսերի տարանջատումը: Բացի այդ, բյուջեի հաշվետվությունում վերլուծված չեն ծախսերը ըստ ծրագրերի, և չի ներկայացվում, թե արդյո՞ք նախատեսված ծրագրերն իրականացվել են սահմանված արդյունավետությամբ:

3.3. Պակասուրդը

Զսպող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում պետական բյուջեի պակասուրդը նվազել է: 2019 թվականին այն կազմել է ՀՆԱ-ի 1%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: Առանց 2019 թվականի ՌԴ-ից ստացված ռազմական վարկը հաշվի առնելու, պետական բյուջեի պակասուրդը կազմում է ՀՆԱ-ի 0.5%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 1.26 տոկոսային կետով:

Պակասուրդի փաստացի ծավալը կազմել է 63.9 մլրդ դրամ, մինչդեռ պլանավորված պակասուրդը կազմում է 151.6 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանով սահմանված պակասուրդը՝ 153.8 մլրդ դրամ: Պակասուրդի կատարման տոկոսը պլանի նկատմամբ կազմել է 42.2%, իսկ ճշտված պլանի նկատմամբ՝ 41.6%:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները

մլրդ դրամ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	151.6	153.8	63.9	41.6%
Ներքին աղբյուրներից	54.1	14.6	(13.3)	-91.0%
Արտաքին աղբյուրներից	97.5	139.2	77.3	55.5%

Ըստ պետական բյուջեի տարեկան պլանի՝ 2019թ. նախատեսվում էր ներքին աղբյուրներից պակասուրդի ֆինանսավորման համար ներգրավել մոտ 54.1 մլրդ դրամ, որը տարվա ընթացքում ճշգրտվել է դեպի ներքև՝ դառնալով 14.6 մլրդ դրամ, իսկ փաստացի արդյունքներով ներքին աղբյուրներից զուտ ներգրավումը եղել է բացասական՝ 13.3 մլրդ դրամ: Դա նշանակում է, որ ներքին պարտքն ավելի շատ մարվել է, քան նոր պարտք է ներգրավվել:

Արտաքին ֆինանսավորումը ի սկզբանե նախատեսված է եղել 97.5 մլրդ դրամի չափով և տարվա ընթացքում ճշտվել է դեպի վեր՝ կազմելով 139.2 մլրդ դրամ: Սակայն, փաստացի արդյունքը պլանավորված ցուցանիշից եղել է 20.7%-ով, իսկ ճշտված ցուցանիշից՝ 44.5%-ով ցածր: Արտաքին ֆինանսավորման նվազումը պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ: Եթե ծրագիրը չի իրականացվում, ապա դոնոր կազմակերպությունները չեն փոխանցում վարկային միջոցները: Հետևաբար, սա ոչ թե կառավարության կողմից պարտքի կառուցվածքի բարելավման քաղաքականությունն է, այլ կապիտալ ծրագրերի իրականացման անկարողությունն է, որի պատճառով տուժում է ոչ միայն ՀՀ

տնտեսական աճը, այլ նաև Հայաստանի Հանրապետության միջազգային վարկանիշը:


Պակասուրդի ֆինանսավորման ցուցանիշների դեպքում նույնպես, կառավարության կողմից իրականացված պլանի ճշտումներն անհասկանալի են, քանի որ փաստացի ցուցանիշները հեռու են ինչպես պլանավորված, այնպես էլ ճշտված պլանային ցուցանիշներից:

4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ պետական պարտքը 2019թ. վերջի դրությամբ կազմել է 7,324.2 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ-ի 53.5%: Պետական պարտքը նախորդ տարվա նկատմամբ աճել է 5.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է կառավարության պարտքի աճով: ՀՀ կենտրոնական բանկի պարտքը կազմել է 489.3 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 3.6%-ը)՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 11%-ով:

Հարկաբյուջետային քաղաքականության զսպող ուղղության պայմաններում կառավարության պարտքն աճել է 7.3%-ով՝ կազմելով 6,834.9 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, ներքին պարտքն ունեցել է առաջանցիկ աճի տեմպ՝ 10.7%-ի չափով, ինչի արդյունքում ներքին պարտքի կշիռն աճել է՝ կազմելով 22.5%՝ նախորդ տարվա 21.8%-ի փոխարեն:

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պարտքը 2016-2019 թվականներին



2019թ. ընթացքում գրանցված բարձր տնտեսական աճի պայմաններում կառավարության պարտքի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 50% շեմից՝ կազմելով 49.9%: Հարկ է նշել, որ կառավարությունը հարկաբյուջետային կանոններին համահունչ մշակված 2019-2023թթ. պարտքի նվազեցման ծրագրով նախատեսում էր պարտքի

կշիռը ՀՆԱ-ի 50%-ից նվազեցնել 2023 թվականին: Մինչդեռ այդ թիրախը հնարավոր է եղել ապահովել 2019-ին:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

2019 թվականին ՀՀ տնտեսական աճը կազմել է 7.6%, որին նշանակալի նպաստում են ունեցել նաև մի շարք ժամանակավոր գործոններ, ինչպիսիք են, օրինակ՝ ավտոմեքենաների ներմուծման, ՀՀ տարածքում վերանորոգման և դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ վերավաճառքի կտրուկ աճը, ստվերային տնտեսության կրճատումը և այլն: Դրանք հիմնականում նպաստել են սպառման աճին, ինչի արդյունքում էլ ծախսային բաղադրիչների (պահանջարկի) տեսանկյունից ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը վատթարացել է: Տնտեսական աճը հիմնված է եղել միայն սպառման վրա, իսկ ներդրումները, որոնք անհրաժեշտ են հետագա տնտեսական աճի համար, նվազել են: Հետևաբար կարող ենք նշել, որ կառավարության կողմից խոստացված՝ բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկման հաշվին տնտեսական աճի ապահովման ուղղությամբ դեռևս առաջընթաց չի գրանցվել:

2019 թվականին պահպանվել է ցածր գնաճային միջավայրը: 12-ամսյա գնաճը կազմել է 0.7%, իսկ միջին գնաճը՝ 1.4%: Ելնելով ցածր գնաճային զարգացումներից՝ ՀՀ ԿԲ-ն տարվա ընթացքում երկու անգամ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 5.5%-ի: Սակայն, դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի փոփոխությունը չի օգնել գնաճը մոտեցնել նույնիսկ ԿԲ-ի թիրախի ստորին սահմանին:

Ծախսերի թերակատարման երևույթը շարունակվել է նաև 2019-ին: 2017-ին ընդունված և 2018-ից գործող հարկաբյուջետային նոր կանոնների համաձայն՝ կառավարությունը պետք է աստիճանաբար մեծացներ կապիտալ ծախսերի կշիռը՝ նպաստելով տնտեսական աճի արագացմանը և պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազմանը: Այդ տրամաբանությամբ ինչպես 2019 թվականի բյուջեի մասին օրենքով, այնպես էլ 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով նախատեսել է կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության աճ՝ նշված փաստաթղթերում 2019-ի համար սահմանելով համապատասխանաբար 3.3% և 4.1% կանխատեսվող ցուցանիշները: Սակայն, զգալի թերակատարումների արդյունքում, փաստացի կապիտալ ծախսերի ցուցանիշը կազմել է ընդամենը 2.9%, ինչն ավելի ցածր է, քան 2016 և 2017 թվականների ցուցանիշները:

Ծրագրային բյուջետավորմանն անցումը դեռևս չի կարող համարվել կայացած, քանի որ բյուջեում ներառված ծրագրերի մեծ մասը չունեն քանակական թիրախներ: Այս հանգամանքը անհնարին է դարձնում ծրագրերի

արդյունավետության գնահատումը, ինչը ծրագրային բյուջետավորման իրականացման գլխավոր նպատակներից է:

Ակնհայտ է, որ կապիտալ ծախսերի իրականացման կարողությունների տեսանկյունից կառավարությունը լուրջ խնդիրներ ունի, քանի որ դրանք արդեն երկրորդ տարին զգալի թերակատարվում են: Հատկապես արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերը, որոնք հիմնականում հանդիսանում են ենթակառուցվածքային ներդրումային ծրագրեր, չեն կատարվում՝ վնասելով և՛ ՀՀ տնտեսական աճին, և՛ դոնոր կազմակերպությունների շրջանում ՀՀ միջազգային վարկանիշին:

Սահմանված չափով ծախսերի չկատարման արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը շեղվել է պլանավորված ուղղությունից: Այսպես, 2019թ. բյուջեով նախատեսվում էր իրականացնել չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն, սակայն փաստացի հարկաբյուջետային ազդակը եղել է զսպող:

Պետական բյուջեի եկամուտները թեև գերակատարվել են բյուջեով հաստատված պլանի նկատմամբ, սակայն ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 1.6%-ով: Հարկային եկամուտների ծավալը 2019-ին նախորդ տարվա համեմատ աճել է 16.4%-ով, ինչին հիմնականում նպաստել են եկամտային հարկի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքերի բարձր աճերը:

2019 թվականին արձանագրված բարձր տնտեսական աճի և պետական բյուջեի պակասուրդի նվազման պայմաններում արձանագրվել է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազում, իսկ կառավարության պարտքը նվազել է ՀՆԱ-ի 50% շեմային մակարդակից: Սակայն, հաշվի առնելով ներկա ճգնաժամը, դժվար թե հաջողվի պարտքի մակարդակը պահպանել 50%-ից ցածր մակարդակում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: